

Հավելված Ա

Հարավային Կովկասում Էկոլոգիական միջանցքների ստեղծմանն աջակցություն Տեխնիկական առաջադրանք

**ԷՄՀ պահպանության համաձայնագրերի շահառուների կողմից մոնիթորինգի և
հաշվետվողականության համար խելացի հեռախոսի /smart phone/ հավելվածի և տվյալների
բազայի հավելվածի մշակում և օգտագործման վերաբերյալ խորհրդատվության
տրամադրում:**

1. Ծրագրի նկարագիրը, նպատակը և արդյունքները

«Հարավային Կովկասում Էկոմիջանցքների ծրագիրը» իրականացվում է Բնության համաշխարհային հիմնադրամի (ԲՀՀ) Կովկասի ծրագրային գրասենյակի կողմից՝ KfW Զարգացման բանկի միջոցով Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության կողմից հատկացված միջոցներով: GOPA խորհրդատուների, DFS-ի and HessenForst կազմակերպությունների կոնսորցիումը տրամադրում են իրականացման խորհրդատվական ծառայություններ:

Ծրագրի կողմից, որպես գործիք, ստեղծվել է «Էկոտարածաշրջանային միջանցքի հիմնադրամ» (ԷՄՀ) Էկոլոգիական միջանցքներում կայուն հողօգտագործման փորձը պայմանագրային բնապահպանության միջոցով խթանելու նպատակով: ԷՄՀ-ն երկարաժամկետ ֆինանսական գործիք է, որը գործարկվում և կառավարվում է ԲՀՀ-ի Կովկասի ծրագրային գրասենյակի կողմից, ի սկզբանե Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության ֆինանսավորմամբ, սակայն բաց է այլ դոնորների և ֆինանսավորման աղբյուրների համար:

Էկոմիջանցքների ծրագիրը ԷՄՀ գործունեության հիմնման փուլն է իր սկզբնական հինգ տարվա համար: Այն իրականացվում է ծրագրի թիմի կողմից, ներառյալ ԲՀՀ-ի Կովկասի ծրագրային գրասենյակը, Գերմանիայի ԲՀՀ-ը և խորհրդատվական թիմը:

ԷՄՀ նպատակն է Հարավային Կովկասում ընտրված Էկոմիջանցքների Էկոլոգիապես կայուն հողօգտագործման համար ֆինանսների ներդրումը, այսպիսով նպաստելով պահպանվող տարածքների փոխկապակցմանը և հզորացնելով նրանց Էկոլոգիական կայունությունը:

ԷՄՀ խնդիրն է նպաստել կենսաբազմազանության պահպանությանը և կայուն օգտագործմանը՝ առանց նվազեցնելու տեղի գյուղական բնակչության եկամուտները: Տրամադրվող ֆինանսական միջոցներն օգնում են ընտրված էկոլոգիական միջանցքների տեղի գյուղական բնակչությանը (շահառուներին) կառավարելու իրենց հողերը էկոլոգիապես կայուն ճանապարհով:

Պահպանության խնդիրները սահմանելու և ֆինանսավորվելիք պահպանության միջոցառումների շրջանակը որոշելու համար շահառուների մասնակցությամբ կմշակվեն երկարաժամկետ (մինչև 10 տարի) հողերի/ռեսուրսների օգտագործման պլաններ: Հիմնվելով այս հողերի/ռեսուրսների օգտագործման պլանների վրա՝ կկնքվեն կոնկրետ «Պահպանության համաձայնագրեր» հողերի կառավարիչների հետ: Վճարումներն ըստ այս համաձայնագրերի կերաշխավորեն, որ կենսաբազմազանության վրա թիրախավորված հողի կառավարման համար հավելյալ ծախսերը փոխհատուցվում են, և այսպիսով՝ հողօգտագործման փորձը (ներառյալ համայնքային պահպանվող տարածքները) համապատասխանում է էկոլոգիական միջանցքներում կիրառվող կայուն հողօգտագործման սկզբունքներին:

Ծրագրի ակնկալվող արդյունքներն են.

Արդյունք 1: ԷՄՀ-ն ստեղծվել է որպես գործիք էկոլոգիական միջանցքներում կայուն հողօգտագործման փորձը խթանելու համար:

Արդյունք 2: ԷՄՀ-ի միջոցների շնորհիվ շահառուների մասնակցությամբ մշակվել են երկարաժամկետ հողօգտագործման պլաններ: Պլանները նպատակ ունեն աջակցել բնական պաշարների էկոլոգիապես խոհեմ օգտագործմանը:

Արդյունք 3: Հողօգտագործման պլանների հիման վրա համաձայնեցվել (Պահպանության համաձայնագրեր) և իրականացվել են կոնկրետ միջոցառումներ:

Արդյունք 4: ԷՄՀ-ի համար լրացուցիչ ֆինանսական միջոցների հայթայթում:

2. Էկոլոգիական միջանցքի հիմնադրամի մոնիթորինգի շրջանակները

Ակնկալվում է, որ մինչև 2019 թվականի ամառ երեք երկրներում կստորագրվեն 15-18 պահպանության համաձայնագրեր: Պահպանության համաձայնագրերը պետք է ստուգվեն և զեկուցվեն, ուստի դրանք ներառում են մոնիթորինգի և հաշվետվության հետ կապված գործողությունների բաժին: Յուրաքանչյուր շահառու կազմակերպություն պետք է

տարեկան տեխնիկական հաշվետվություն ներկայացնի իր գործունեության և համաձայնեցված պահպանության նպատակների առաջընթացի վերաբերյալ:

Տարեկան հաշվետվությունները ներառում են.

- պլանավորված գործողությունների թիրախային և փաստացի արժեքների համեմատություն,
- զարգացումները տվյալ ժամանակաընթացքում,
- ԷՄՀ միջոցների օգտագործում և այլ միջոցների մոբիլիզացիա,
- տեղեկատվություն խնդիրների և դրանց հնարավոր լուծումների վերաբերյալ:

Յուրաքանչյուր տարի ընտրվելու է պահպանության համաձայնագրերից մեկը՝ երրորդ կողմի կողմից դրանց կատարողականի անկախ ստուգման կամ աուդիտի նպատակով:

Պարբերաբար կիրականացվի ԷՄՀ-ի արտաքին գնահատում:

Տարբեր պահպանության համաձայնագրեր ունեն տարբեր նպատակներ և ներառում են տարբեր գործողություններ, սակայն դրանք ունեն բազմաթիվ ընդհանուր տարրեր: Աջակցվող պահպանության միջոցառումներն ընտրվում են միջոցառումների ցանկից, որը ներառում է 20 տարբեր միջոցառումներ: Այս միջոցառումների մեծ մասը կապված է համայնքային պահպանվող տարածքի աշխարհագրական գոտիների հետ, որոնք սահմանված են պահպանության համաձայնագրի շրջանակում:

ԷՄՀ մոնիթորինգի շրջանակի նպատակն է.

- Պահպանության շահառուների և ամբողջությամբ ԷՄՀ ծրագրի մակարդակով հաշվետվության համար անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրում,
- ՏՏ աջակցության տրամադրում շահառու կազմակերպություններին ամենօրյա կառավարման համար:

Վերը նշված նպատակին հասնելու համար կօգտագործվի խելացի հեռախոսի (Android) հավելվածի և համացանցի վրա հիմնված տվյալների բազայի համադրություն: Տվյալների հավաքագրումը դաշտում կանցկացնեն շահառու կազմակերպությունների աշխատակիցները՝ օգտագործելով խելացի հեռախոսի հետազոտությունը և յուրաքանչյուր բնապահպանական համաձայնագրի համար անհատականացված քարտեզը: Հավելվածը պետք է նաև հնարավորություն տա օգտագործողին օգտագործել պահպանվող տարածքի նախնական ներբեռնված տեղագրական քարտեզը՝ նշագրված գոտիներով: Ծրագրի

ինտերֆեյսը պետք է հնարավորություն տա օգտագործել օտար լեզուներով, այդ թվում՝ վրացերեն: Տերմինների թարգմանությունը տրամադրելու է ԷՄՀ թիմը:

Տվյալները կներբեռնվեն ընդհանուր տվյալների բազա, որը հնարավորություն կտա տվյալների պահպանման, վերլուծության, կատարված գործողությունների և ձեռք բերված ցուցանիշների հաղորդման: Տվյալների բազան կկառավարվի WWF Կովկասի ծրագրային գրասենյակի կողմից, իսկ տարբեր օգտատերեր կունենան տարբեր մուտք դեպի տվյալների բազա՝ կախված իրենց դերից և կարիքներից: Տվյալների բազան պետք է ունենա GIS-ի հենքի վրա ստեղծված ինտերֆեյս: Տվյալների բազան պետք է ներառի առնվազն 20 հետազոտություն 10 տարիների կտրվածքով, ընդհուպ մինչև յուրաքանչյուր հետազոտության մեջ ներառված յուրաքանչյուր օր արված արձանագրությունները: Հատուկ լուծում պետք է գտնել լուսանկարների պահպանման համար, կամ սեղմման կամ որոշ ժամանակ անց առաջնահերթ լուսանկարների ընտրության կամ երկուսի համադրություն առումով:

Հավելվածը պետք է թույլ տա տարբեր հետազոտությունների նախագծում՝ կախված պահպանության համաձայնագրի գործունեության շրջանակից, որը հիմնված է ոլորտների ստանդարտ փաթեթի վրա, որը հնարավորություն կտա տվյալները ժողովել տվյալների բազայի վերին մակարդակներում: Հետազոտության մուտքագրման հիմնական կառուցվածքը պետք է լինի հետևյալը.

GPS կոորդինատ	Ամսաթիվ	Ժամ	Գոտի(քարտեզից ստացված կամ ընտրված)	Ֆիքսված գործողությունների ցանկ՝ հիմնված գոտու վրա	Ընտրված գործողության վրա հիմնված տվյալների մուտքագրման ձևը. Սա կարող է ներառել լուսանկարներ, GPS երթուղի, GPS մակերես, թվային և տեքստային դաշտեր:
------------------	---------	-----	--	--	---

Խաչիկի պահպանության համաձայնագրի հիման վրա հետազոտության բնութագրական օրինակը կցված է, որպես Հավելված 1: Տվյալների մուտքագրումը պետք է ներառի ցանկի

ընտրություն, տեքստ, թվեր, լուսանկարներ, GPS կետ, GPS երթուղի, GPS տարածք, խելացի հեռախոսի ժամ ու ամսաթիվ:

Արձանագրությունները պետք է պահվեն խելացի հեռախոսի մեջ, USB port-ի միջոցով պատճենելու հնարավորությամբ: Հեռախոսից տվյալների բազա ներբեռնումը պետք է իրականացվի ավտոմատ կերպով ըստ ժամանակացույցի (օր.՝ օրական) կամ ձեռքով, երբ համացանցը GSM- ի կամ WI-FI- ի միջոցով հասանելի լինի:

Տվյալների բազան սերվերի վրա պետք է տեղադրվի WWF Կովկասի ծրագրային գրասենյակի վերահսկողությամբ: Այն պետք է ներառի բնապահպանական համաձայնագրերում նշված բոլոր աշխարհագրական տարածքները և գործողությունները: Այն պետք է հնարավորություն տա ընդլայնվել լրացուցիչ գործողություններով, եթե նոր պայմանավորվածություններ և միջոցառումներ են ավելանում ծրագրին: Այն պետք է հնարավորություն տա բնապահպանական համաձայնագրերից յուրաքանչյուրի համար նախագծել և պատրաստել ստանդարտ պարբերական հաշվետվություններ Excel ֆայլերի տեսքով: Այն պետք է բոլոր բնապահպանական համաձայնագրերի վերաբերյալ հետազոտությունների հնարավորություն տա:

Հավելվածը և տվյալների բազան օգտագործվելու են հետևյալ օգտագործողների կողմից.

- Շահառուների դաշտային անձնակազմը՝ դաշտում կողմնորոշվելու, իրականացվելիք գործողությունները սահմանելու, այդ գործողությունները և դրանց արդյունքները արձանագրելու, իրենց աշխատանքի վերաբերյալ հաշվետվություններ պատրաստելու համար,
- Շահառու կազմակերպությունների ղեկավարները՝ վերահսկելու իրենց աշխատակազմի գործունեությունը, պահպանության համաձայնագրերի կատարողականը և պատրաստելու հաշվետվություններ WWF Կովկասի ծրագրային գրասենյակ ներկայացնելու համար
- WWF Կովկասի ծրագրային գրասենյակի աշխատակիցները՝ վերահսկելու շահառու կազմակերպությունների գործունեությունը, ստուգելու ստացված հաշվետվությունները, վերլուծելու ծրագրի արդյունքները, պատրաստելու հաշվետվություններ հանրության և դոնորների համար, տեղեկատվություն տրամադրելու արտաքին գնահատման համար:

3. Աշխատանքի շրջանակը

Առաջադրանքի նպատակն է մշակել և փորձարկել ԷՄՀ պահպանության համաձայնագրերի շահառուների կողմից մոնիտորինգի և հաշվետվողականության համար խելացի հեռախոսի և տվյալների բազայի հավելված: Խորհրդատուն կաշխատի խորհրդատվական թիմի և WWF Կովկասի ծրագրային գրասենյակի անձնակազմի հետ:

Խորհրդատուի առաջադրանքը ներառելու է.

- Հիմնվելով առկա տեղեկատվության վրա՝ մշակել տվյալների բազայի և սմարթֆոնների հավելվածի մանրամասն պլան,
- Մշակել սմարթֆոնների հավելված,
- Մշակել տվյալների բազա,
- Հավելվածի և տվյալների բազայի դաշտային փորձարկում Հայաստանում պահպանության երկու համաձայնագրերի շրջանակում, ներառյալ օգտագործողի փորձի փորձարկումը խնամակալների և շահառու ղեկավարների հետ,
- Տվյալների բազայի մշակման ավարտ,
- WWF Կովկասի ծրագրային գրասենյակում ադմինիստրատորների և փորձառու օգտվողների համար անգլերեն լեզվով դասընթացների ապահովում, այդ թվում՝ անհատական հետազոտությունների պատրաստում և փաստացի օգտագործողների վերապատրաստում,
- Իրականացման ժամանակահատվածում տեխնիկական սպասարկման և օգտագործողներին աջակցության ապահովում:

Խորհրդատուն պատասխանատու կլինի սահմանված ծառայությունների շրջանակն ստուգելու և դրանց ընդլայնման, նվազեցման կամ փոփոխման վերաբերյալ առաջարկ անելու, ինչպես և երբ անհրաժեշտ կգտնի դա՝ համաձայն մասնագիտական փորձի և ծրագրի իրականացման ընթացքում ձեռք բերված գիտելիքների: Աշխատանքի շրջանակի վերաբերյալ տեղեկատվության լրացուցիչ աղբյուրները ներառում են Տեխնիկական առաջադրանքը, Ընթացակարգերի վերաբերյալ ձեռնակը, WWF-ի և KfW-ի այլ համապատասխան փաստաթղթերը:

Խորհրդատուի աշխատանքի բոլոր արդյունքները պետք է համապատասխանեն KfW-ի և WWF-ի ընթացակարգերին և այլ պահանջներին:

4. Ժամանակացույց և հաշվետվություն

Վերը նշված աշխատանքի համար 2018 և 2019 թվականներին պլանավորված ժամանակացույցը 9 օրացուցային ամիս է:

Խորհրդատուն հաշվետվություն է ներկայացվում գլխավոր տեխնիկական խորհրդատուին՝ WWF Կովկասի ծրագրային գրասենյակի ընդհանուր վերահսկողության ներքո: Նա իր գործունեությունը համակարգում է WWF-ի և խորհրդատվական թիմի այլ անդամների հետ: Աշխատանքը կկազմակերպվի հետևյալ փուլերով.

- Խելացի հեռախոսի հավելվածի և տվյալների բազայի մանրամասն պլանի մշակում,
- Հավելվածի և տվյալների բազայի փորձնական տարբերակի մշակում,
- Դաշտային փորձարկում,
- Հավելվածի և տվյալների բազայի վերջնական տարբերակի մշակում,
- Ադմինիստրատորների և փորձառու օգտագործողների վերապատրաստում,
- Իրականացում /2019թ. ամառ/:

5. Հաշվետվություն

Խորհրդատուն կներկայացնի հետևյալ վերջնարդյունքները.

1. Մանրամասն պլան խելացի հեռախոսի հավելվածի և տվյալների բազայի համար,
2. Հավելվածի փորձնական տարբերակ,
3. Տվյալների բազայի փորձնական տարբերակ,
4. Հաշվետվություն դաշտային փորձարկումների վերաբերյալ,
5. Հավելվածի վերջնական տարբերակ օգտագործողի անգլերեն ձեռնարկով,
6. Տվյալների բազայի վերջնական տարբերակ օգտագործողի անգլերեն ձեռնարկով,
7. Ուսումնական նյութեր,
8. Ավարտական տեխնիկական հաշվետվություն, որը նկարագրում է մշակման ընթացքը և առաջարկություններ անում հետագայի համար:

6. Պահանջները

Առաջադրանքը կկատարվի հետևյալ որակավորումներ ունեցող ընկերության կողմից.

- Խելացի հեռախոսների հավելվածների և տվյալների բազայի մշակման մասնագիտական փորձ,
- Փորձ Հարավային Կովկասում:

Հավելված 1: Խաչիկի տվյալների հավաքագրման հետազոտության սխեմա

Քայլ 1	Քայլ 2	Քայլ	Քայլ 4	Քայլ 5	Քայլ 6 - Մուտքագրման ձև		
GPS	Ամսաթիվ	Ժամ	Գոտի (Կող)				
				Գործողություն	Դաշտ	Նկար	Դաշտ
			P0 արոտավայր և այլ հողեր	Խնամակալների պարեկություն	Ժամանակ (ժամեր)	նկար	
				Հաղորդակցություն տեղացիների հետ	Ներգրավված անձինք /Թիվը/		
				Հաղորդակցություն այցելուների հետ	Ներգրավված անձինք /Թիվը/		
				Անասունների առկայությունը արոտավայրում /S/Թ/	Ազդեցության տարածք/հա/	նկար	
				Անասունների առկայության ապացույց արոտավայրում	Ազդեցության տարածք/հա/	նկար	
				Արածեցման օրացույցի գործարկում	Ներգրավված անձինք /Թիվը/	նկար	
				Արձագանք անօրինական կամ արգելված գործողություններին	Նկարագրություն /տեքստ/	նկար	
				Բեզոարյան այծի դիտարկում	Դիտված կենդանիների քանակը	նկար	Արու, էգ, երիտասարդ
Մուֆլոնի դիտարկում	Դիտված կենդանիների քանակը	նկար		Արու, էգ, երիտասարդ			
Գորշ արջի դիտարկում	Դիտարկված նշանի տեսակը	նկար	կղկղանք, հետք,				

							սպանված, վնասված
				Ընձառյուծի դիտարկում	Դիտարկված նշանի տեսակը	նկար	կղկղանք, հետք, սպանված, վնասված
				Բեզոարյան այծերի հաշվառում	Ամառ, հողակտոր, քանակ	նկար	Արու, էգ, երիտասարդ
				Բեզոարյան այծերի հաշվառում	Զմեռ, հողակտոր, քանակ	նկար	Արու, էգ, երիտասարդ
				Բույսերի վերաբերյալ տվյալների հավաքագրում	Մշտական փորձնական հողակտոր	նկար	Տեսակների քանակը
			Չխաթարվող գոտի P1	Խնամակալների պարեկություն	Ժամանակ / ժամեր/	նկար	
			Չխաթարվող գոտի P5				
			Չխաթարվող գոտի P7				
			Չխաթարվող գոտի P9	Արձագանք անօրինական կամ արգելված գործողություններին	Նկարագրություն /տեքստ/	նկար	
				Հաղորդակցություն տեղացիների հետ	Ներգարվված անձինք/թիվ/	նկար	
				Հաղորդակցություն այցելուների հետ	Ներգարվված անձինք/թիվ/	նկար	
				Բեզոարյան այծերի դիտարկում	Դիտված կենդանիների թիվը	նկար	Արու, էգ, երիտասարդ
				Մուֆլոնի դիտարկում	Դիտված կենդանիների թիվը	նկար	Արու, էգ, երիտասարդ
				Գորշ արջի դիտարկում	Դիտարկված նշանի տեսակը	նկար	կղկղանք, հետք,

							սպանված, վնասված,
				Ընձառյուծի դիտարկում	Դիտարկված նշանի տեսակը	նկար	կղկղանք, հետք, սպանված, վնասված,
				Բեզոարյան այծերի հաշվառում	Ամառ, հողակտոր, քանակ	նկար	արու, էգ, երիտասարդ
				Բեզոարյան այծերի հաշվառում	Զմեռ, հողակտոր, քանակ	նկար	արու, էգ, երիտասարդ
				Բույսերի վերաբերյալ տվյալների հավաքագրում	Մշտական փորձնական հողակտոր	նկար	Տեսակների քանակը
		P3 Արոտավայրը հասանելի է անասունների համար հունիսի 1-ից	Անասուններ ներկայությունը արոտավայրում /տ/թ/	Ազդեցության տարածք /հա/			
		P2 Արոտավայր հասանելի է անասունների համար հուլիսի 1-ից	Անասունների առկայության ապացույց	Ազդեցության տարածք /հա/			
		P4 Արոտավայր հասանելի է անասունների համար հուլիսի 1-ից	Արածեցման օրացույցի գործարկում	Ներգրավված անձինք /թիվ/			
		P6 Արոտավայր հասանելի է անասունների համար հուլիսի 1-ից	Զրախմոցի ստուգում	Զրախմոցի նույնականացման համար			
		P8 Արոտավայրը հասանելի է անասունների համար հուլիսի 15-ից	Զրախմոցի պահպանում	Զրախմոցի նույնականացման համար			
			Շարժական կացարանի ստուգում	Շարժական կացարանի նույնականացման համար	նկար	Ժամը (ժամեր)	

				Շարժական կացարանի պահպանում	Շարժական կացարանի նույնականացման համար	նկար	Ժամը (ժամեր)
				Շարժական կացարանի տեղաշարժում և տեղադրում	Շարժական կացարանի նույնականացման համար	նկար	Ժամը (ժամեր)
				Հաղորդակցություն տեղացիների հետ	Ներգրավված անձինք /թիվ/		
				Հաղորդակցություն այցելուների հետ	Ներգրավված անձինք /թիվ/		
				Արձագանք անօրինական կամ արգելված գործողությունների	Նկարագրություն /տեքստ/		
				Բեզոարյան այծերի դիտարկում	Դիտված կենդանիների թիվը	նկար	Արու, էգ, երիտասարդ
				Մուֆլոնի դիտարկում	Դիտված կենդանիների թիվը	նկար	Արու, էգ, երիտասարդ
				Գորշ արջի դիտարկում	Դիտարկված նշանների տեսակը	նկար	Կղկղանք, հետք, սպանված, վնասված
				Ընձառյուծի դիտարկում	Դիտարկված նշանների տեսակը	նկար	scat, track, kill, damage
				Բեզոարյան այծերի հաշվառում	Ամառ, հողակտոր, քանակ	նկար	Արու, էգ, երիտասարդ
				Բեզոարյան այծերի հաշվառում	Զմեռ, հողակտոր, քանակ	նկար	Արու, էգ, երիտասարդ

				Բույսերի վերաբերյալ տվյալների հավաքագրում	Մշտական փորձնական հողակտոր	նկար	Տեսակների քանակը
		Վարելահող արտադրության /ՎՀ/ խոտի համար	Բազմամյա մշակաբույսերի հերկում և ցանում /> 50 հա/	Տարածք (հա) - GPS մուտքագրում			
			Մշակաբույսերի բերքահավաք և հակավորում	Տարածք (հա) - GPS մուտքագրում			Հակերի քանակը
			Խոտի տեղափոխում դեպի գյուղ	Հակերի քանակը			
			Խոտի բաշխումը անասնապահներին	Անձի անունը, հակերի քանակը			
			Հաղորդակցություն տեղացիների հետ	Ներգրավված անձինք /թիվ/			
			Հաղորդակցություն այցելուների հետ	Ներգրավված անձինք /թիվ/			
			Արձագանք անօրինական կամ արգելված գործողություններին	Նկարագրություն /տեքստ/			
			Բեզոարյան այծերի դիտարկում	Դիտված կենդանիների քանակը	նկար		Արու, էգ, երիտասարդ
			Մուֆլոնի դիտարկում	Դիտված կենդանիների քանակը	նկար		Արու, էգ, երիտասարդ
			Բեզոարյան այծերի դիտարկում	Դիտարկված նշանի տեսակը	նկար		Կոկոս, հետք, սպանված, վնասված

				Ընձառյուծի դիտարկում	Դիտարկված նշանի տեսակը	նկար	Կոկոն, հետք, սպանված, վնասված
				Բեզոարյան այծերի հաշվառում	Ամառ, հողակտոր, քանակ	նկար	Արու, էգ, երիտասարդ
				Բեզոարյան այծերի հաշվառում	Զմեռ, հողակտոր, քանակ	նկար	Արու, էգ, երիտասարդ
				Բույսերի վերաբերյալ տվյալների հավաքագրում	Մշտական փորձնական հողակտոր	նկար	Տեսակների քանակը
			Բարձր կենսաբազմազանությամբ մարգագետիններ /ԲՄ/	Խոտի հունձ (>40 հա)	Տարածք (հա) - GPS մուտքագրում		
				Խոտի չորացում և հակավորում	Դեզերի քանակը		
				Հաղորդակցություն տեղացիների հետ	Ներգրավված անձինք /թիվ/		
				Հաղորդակցություն այցելուների հետ	Ներգրավված անձինք /թիվ/		
				Արձագանք անօրինական կամ արգելված գործողությունների	Նկարագրություն /տեքստ/		
				Բեզոարյան այծերի դիտարկում	Դիտված կենդանիների քանակը	նկար	Արու, էգ, երիտասարդ
				Մուֆլոնի դիտարկում	Դիտված կենդանիների քանակը	նկար	Արու, էգ, երիտասարդ
				Գորշ արջի դիտարկում	Դիտարկված նշանի տեսակը	նկար	Կոկոն, հետք,

							սպանված, վնասված
			Ընձառյուծի դիտարկում	Դիտարկված նշանի տեսակը	նկար	Կդկդանք, հետք, սպանված, վնասված	
			Բեզոարյան այծերի հաշվառում	Ամառ, հողակտոր, քանակ	նկար	Արու, էգ, երիտասարդ	
			Բեզոարյան այծերի հաշվառում	Զմեռ, հողակտոր, քանակ	նկար	Արու, էգ, երիտասարդ	
			Բույսերի վերաբերյալ տվյալների հավաքագրում	Մշտական փորձնական հողակտոր	նկար	Տեսակների քանակը	
		Անտառ, ԱՀ					
			Անտառի նոսրացում	Տարածք, հատված ծառերի քանակը	նկար		
			Հարստացնող տնկում	Տարածք, տնկված ծառերի քանակը	նկար		
			Հանգստի ենթակառուցվածքի հիմնում	Նկարագրություն/տեքստ/ ենթակառուցվածքի նույնականացման համարը	նկար	Ժամը /Ժամեր/	
			Հանգստի ենթակառուցվածքի ստուգում	Ենթակառուցվածքի նույնականացման համարը	նկար	Ժամը /Ժամեր/	
			Հանգստի ենթակառուցվածքի պահպանում	Ենթակառուցվածքի նույնականացման համարը	նկար	Ժամը /Ժամեր/	
			Ցանկապատում	Տարածք, ցանկապատը մետրով	նկար		

				Ցանկապատի հեռացում	Տարածք, ցանկապատը մետրով	նկար	
				Հաղորդակցություն տեղացիների հետ	Ներգարվված անձինք /թիվը/		
				Հաղորդակցություն այցելուների հետ	Ներգարվված անձինք /թիվը/		
				Արձագանք անօրինական կամ արգելված գործողություններին	Նկարագրություն/տեքստ/		
				Բեզոարյան այծերի դիտարկում	Դիտված կենդանիների քանակը	նկար	Արու, էգ, երիտասարդ
				Մուֆլոնի դիտարկում	Դիտված կենդանիների քանակը	նկար	Արու, էգ, երիտասարդ
				Գորշ արջի դիտարկում	Դիտարկված նշանի տեսակը	նկար	Կղկղանք, հետք, սպանված, վնասված
				Ընձառյուծի դիտարկում	Դիտարկված նշանի տեսակը	նկար	Կղկղանք, հետք, սպանված, վնասված
				Բեզոարյան այծերի հաշվառում	Ամառ, հողակտոր, քանակ	նկար	Արու, էգ, երիտասարդ
				Բեզոարյան այծերի հաշվառում	Զմեռ, հողակտոր, քանակ	նկար	Արու, էգ, երիտասարդ
				Բույսերի վերաբերյալ տվյալների հավաքագրում	Մշտական փորձնական հողակտոր	նկար	Տեսակների քանակը

			Գյուղ	Հաղորդակցություն տեղացիների հետ	Ներգրավված անձինք/թիվ/		
				Հաղորդակցություն այցելուների հետ	Ներգրավված անձինք/թիվ/		
				Արձագանք անօրինական կամ արգելված գործողություններին	Նկարագրություն/տեքստ/		
				Արածեցման օրացույցի գործարկում	Ներգրավված անձինք/թիվ/		
				Խոտի տեղափոխում գյուղ	Հակերի քանակը		
				Խոտի բաշխումը անասնապահներին	Անձի անունը, հակերի քանակը		
				Գորշ արջի դիտարկում	Դիտարկված նշանի տեսակը	նկար	Կոկոս, հետք, սպանված, վնասված
				Ընձառյուծի դիտարկում	Դիտարկված նշանի տեսակը	նկար	Կոկոս, հետք, սպանված, վնասված

Հավելված 2: ԷՄՀ կողմից աջակցվող բոլոր հնարավոր միջոցառումների ցանկը /Խաչիկում իրականացվող միջոցառումները գունավորված են/

Կատեգորիա: Ապրելավայրի կառավարում		
Միջոցառում	Նպատակ	Նկարագրություն
Չօգտագործվող և սահմանափակ մուտքով վայրի կենդանիների ապրելավայրի հիմնական գոտի	- Ապահովել անխաթար ապրելավայրեր և/կամ քայլեր ձեռնարկել վայրի կենդանիների տեսակների համար - Էկոհամակարգերի պահպանություն և բնական զարգացում	- Մարդկային գործունեության հնարավորինս սահմանափակում
Արտավայրի կառավարում	- Խոտհարքների կենսաբազմազանության պահպանություն - Անտառային հրդեհների նվազեցում - Արտավայրերի արտադրողականության պահպանում և/կամ բարձրացում	- Ռոտացիոն արածեցում - Վերահսկվող արածեցում - Խոտի պարբերաբար հունձ
Մարգագետինների կառավարում	- Պահպանել բույսերի մեծ բազմազանությունը - Կերի մատակարարում վայրի և ընտանի կենդանիներին - Անտառային հրդեհների ազդեցության նվազեցում	- Մարգագետինների պահպանում - Պարբերաբար խոտհունձ՝ կենսաբազմազանության վրա նվազագույն ազդեցությամբ
Վարելահողի արտադրություն	- Կենդանիների համար կերի արտադրություն բերքառատ հողերի վրա՝ փոխհատուցելու արածեցման կրճատված ժամանակի և կամ այլ տարածքներն օգտագործելու դիմաց - Ավանդական բույսերի սորտերի և/կամ մշակութային ժառանգության պահպանություն - Մարդկանց համար տնտեսական հնարավորությունների ապահովում, որպես կորուստների դիմաց փոխհատուցում	- Վար, ցանք, բերքահավաք - Ծառատունկ, այգու պահպանում

Անտառի կառավարում	- Ապահովել և բարձրացնել անտառի կողմից ապահովվող տարբեր էկոհամակարգային ծառայությունների կայունությունը - Անտառի կարգավորման գործառույթների պահպանում	- Վայրի կենդանիների համար ապրելավայրի ապահովում - Անտառվերականգնում - Փայտանյութային և ոչ փայտանյութային արտադրանքի արտադրություն - Կառավարման պլանավորում - Համապատասխան մարմինների կարողությունների զորացում
Ոչ փայտանյութային անտառային արտադրանք	- Էկոհամակարգերում ոչ փայտանյութային արտադրանքի հավաքից առաջացած խախտման վերահսկողություն - Տեսակի ռեսուրսի գերօգտագործումից խուսափում	- Ռեսուրսների և նրանց կայուն օգտագործման տնտեսական գնահատում - Կառավարման պլանի մշակում - Գնորդների համար հավաքի կանոնների հիմնում և մոնիտորինգ - Արտադրողականությունը բարձրացնելու միջոցառումներ
Ապրելավայրի վերականգնում	- Ապրելավայրերի վերականգնում, որոնք հանդիսանում են լադշաֆտների հիմնական բաղադրիչ և/կամ տարբեր տեսակների համար ապրելավայր	- Էռոզիայի դեմ միջոցառումներ - Տարբեր վերականգնողական կամ շինարարական աշխատանքներ
Տնկում	- Նպաստել կենսաբազմազանության և բնության մշակութային արժեքներին - Հասարակության իրազեկում	- Կարճ գնահատում տնկվելիք տեսակների ընտրության համար - Տնկում և պահպանություն - Պահպանում և վերատնկում - Տարածքի մոնիտորինգ
Բարձրարժեք լանդշաֆտի բաղադրիչները	- Լանդշաֆտների բարձրարժեք բաղադրիչների պահպանում և պահպանություն մարդկանց և վայրի կենդանիների համար - Լանդշաֆտի գործունեության ապահովում	- Գնահատում և պլանավորում - Վերականգնման և շինարարական աշխատանքներ - Տարածքի մոնիտորինգ

Խոչընդոտների վերացում	- Տեսակների համար կարևոր ապրելավայրերի կապ - Կապի համար բաղադրիչների պահպանում	- Գնահատում և պլանավորում - Վերականգնման և շինարարական աշխատանքներ - Տարածքի մոնիտորինգ
Կատեգորիա: Պահպանության կառավարում		
Միջոցառում	Նպատակ	Նկարագրություն
Խնամակալներ (Համայնքային տեսուչներ)	Պահպանության միջոցառումների ակտիվ և արդյունավետ իրականացում - Համայնքների համար սոցիալ-տնտեսական օգուտների ապահովում	- Տարածքների մոնիտորինգ և պահպանության համաձայնագրերի ներքո իրականացվող գործողությունների աջակցում
Հողօգտագործման իրավունքներ	- Համայնքների համար ապահովել հողօգտագործման իրավունքներ - Երաշխավորել հողերը կայուն ձևով կառավարելու համայնքների երկարաժամկետ շահերը	- Գոյություն ունեցող հողի վարձակալության պայմանագրերը դադարեցնելու դիմաց փոխհատուցում - Հողի վարձակալություն - Հողի վարձակալության կամ օգտագործման համաձայնագրի պատրաստման ծախսեր
Վարի գիշատիչների կողմից հասցված վնասների փոխհատուցում	- Նվազեցնել վայրի կենդանիների կողմից հասցված վնասների տնտեսական ազդեցությունը - Բարձրացնել տեղացիների իրազեկությունը և վերաբերմունքը գիշատիչների նկատմամբ, որը կհանգեցնի նրանց սպանությունների նվազեցման (նվազեցնել հակամարտությունները ֆերմերների և վայրի տեսակների միջև)	Վնասների հատուցման հիմնադրամի կառավարում
Համայնքահեն կազմակերպություն	- Պահպանության համաձայնագրում տեղական համայնքը ներկայացնող իրավաբանական անձի գործունեություն	- Համայնքահեն կազմակերպության հիմնում - Կարողությունների զորացում

		- Ընթացիկ ծախսեր
Համայնքային պահպանվող տարած	- Համայնքի կողմից ավելի ընդարձակ տարածքի վրա պահպանվող տարածքի/լանդշաֆտ/ ստեղծում և կառավարում՝ կենսաբազմազանությունը և դրա հետ կապված մշակութային արժեքները /մշակութային լանդշաֆտ/ պահպանելու նպատակով	- Պահպանվող լանդշաֆտի նախագծում - Տարածքի կառավարում տեղական համայնքի կողմից - Կառավարման պլանի մշակում՝ մատնանշելով գոտիավորումը
Անտառի կառավարման պլաններ	Երաշխավորել, որպեսզի անտառները չգերօգտագործվեն և անտառների տարբեր գործառնություններ ապահովվեն և օպտիմիզացվեն	- Անտառի գույքագրում - Կառավարման պլան - Անտառների պահպանություն
Արոտավայրերի կառավարման պլաններ	- Կանխել արոտավայրերի գերօգտագործումը և դեգրադացիան - Ապահովել արդեն իսկ դեգրադացված արոտավայրերի վերականգնումը	- Արոտավայրերի գույքագրում - Կառավարման պլան - Արոտավայրերի պահպանություն և վերականգնում
Վայրի կենդանիների կառավարման տարածք, ներառյալ որսորդական արգելոցը	- Երաշխավորել որսատեսակների երկարաժամկետ պահպանությունը և կանխել որսագողությունը	- Կայուն որսի տարածքների նախագծում - Կառավարման պլան - Բիզնես պլան - Մոնիտորինգի պլան
Հողօգտագործման պլաններ	- Կանխել հողի մշակման և հողօգտագործման փոփոխության բացասական ազդեցությունը կենսաբազմազանության և գոյություն ունեցող լանդշաֆտների վրա	- Իրավիճակի գնահատում - Հողօգտագործման պլանավորում - Պլանի հաստատում

Կատեգորիա. Սոցիալ-տնտեսական փոխհատուցում		
Միջոցառում	Նպատակ	Նկարագրություն
Սոցիալական տնտեսական գործունեություն	և - Աջակցել տեղական համայնքների սոցիալ-տնտեսական գործունեությանը, որը կապված չէ ապրելավայրերի պահպանության հետ, որը նոր եկամուտ և/ կամ այլ օգուտներ կստեղծի, հավասար կամ ավելի մեծ, քան հոդօգտագործման արդյունքում առաջացած եկամուտը և (կամ) օգուտները, որոնք կդադարեցվեն պահպանության համաձայնագրերով:	- Առկա եկամուտների գնահատում - Պահպանության գործողությունների իրականացման արդյունքում ստեղծվելիք ակնկալվող եկամուտների գնահատում - Ներդրումային պլանների հիման վրա կատարվող ներդրումներից ակնկալվող եկամուտների գնահատում: